

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԱՏՎԻՋՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարությունը եւ Լատվիայի Հանրապետության մշակույթի նախարարությունը (այսուհետ՝ Կողմեր),

բարեկամական հարաբերությունները եւ մշակույթի բնագավառում հետագա փոխհամագործակցությունը ամրապնդելու եւ զարգացնելու նպատակով,

համոզված լինելով, որ մշակույթի բնագավառում համագործակցությունը կոչված է նպաստելու ժողովուրդների միջեւ բարեկամության եւ փոխըմբռնման զարգացմանը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1

Կողմերը, սույն Համաձայնագրին համապատասխան եւ իրենց երկրների ազգային օրենսդրության համաձայն, պայմանավորվում են իրականացնել համագործակցություն մշակույթի բնագավառում:

Սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցությունը կներառի մշակույթի բնագավառում, մասնավորապես երաժշտության, թատրոնի, կինեմատոգրաֆիայի, կերպարվեստի, գրադարանային եւ թանգարանային գործի, պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանության, ստեղծագործական ինքնագործունեության, ժողովրդական արհեստագործության, կրկեսային արվեստի բնագավառներում տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաեւ այս բնագավառների ներկայացուցիչների մասնակցությունը երկու երկրների տարածքներում կազմակերպվող միջազգային փառատոներին:

ՀՈՂՎԱԾ 2

Կողմերը երկկողմ նախագծերի հիման վրա նաեւ կօժանդակեն թատերական խմբերի, երաժիշտ-կատարողների հյուրախաղերի եւ էլույթների կազմակերպմանը, գեղարվեստական ցուցահանդեսների եւ թանգարանային նմուշների փոխանակմանը, պրոֆեսիոնալ արվեստի ու ժողովրդական ստեղծագործության ոլորտում փառատոների, մրցույթների, գիտաժողովների, սեմինարների եւ այլ միջոցառումների անցկացմանը:

ՀՈՂՎԱԾ 3

Կողմերը կնպաստեն ուղղակի համագործակցության զարգացմանը թատրոնների, համերգային կազմակերպությունների, պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանությամբ զբաղվող հաստատությունների, գրադարանների եւ ուսումնական ու մշակութային այլ հաստատությունների միջեւ:

ՀՈՂՎԱԾ 4

Կողմերը կօժանդակեն ստեղծագործական միությունների, ինչպես նաեւ մշակույթի գործիչների միջեւ փոխադարձ կապերի զարգացմանը:

ՀՈՂՎԱԾ 5

Կողմերը կհամագործակցեն գեղարվեստական կրթության, մշակույթի եւ արվեստի

ոլորտի աշխատողների եւ մասնագետների որակավորման բարձրացման, գիտամեթոդական տեղեկատվության փոխանակման, դասախոսների եւ ուսանողների վերապատրաստման բնագավառում:

Կողմերը կիրավիրեն մյուս Կողմի մշակույթի գործիչների, գիտնականների եւ մասնագետների՝ մասնակցելու երկու երկրների տարածքներում կազմակերպվող միջազգային բնույթի համագումարների, գիտաժողովների, փառատոների եւ այլ միջոցառումների:

ՅՈՒՐԱԿՑ 6

Կողմերը կերաշխավորեն իրենց տնօրինության տակ գտնվող թանգարանային եւ գրադարանային ֆոնդերը կազմող մշակութային արժեքների հավաքածուների մատչելիությունը:

ՅՈՒՐԱԿՑ 7

Կողմերը կհամագործակցեն երկու երկրներից ապօրինաբար արտահանված արվեստի առարկաները եւ հնաոճ իրերը վերադարձնելու բնագավառում:

ՅՈՒՐԱԿՑ 8

Կողմերը կաջակցեն երկու երկրների կինեմատոգրաֆիական կազմակերպությունների եւ կինոգործիչների համագործակցությանը, ներառյալ՝ ֆիլմերի եւ տեսաարտադրանքի փոխանակմանը, մասնակցությանը փառատոներին, գովազդային նյութերի, ամսագրերի եւ տվյալ ոլորտում այլ հրապարակումների փոխանակմանը:

ՅՈՒՐԱԿՑ 9

Կողմերը տեղեկատվություն կփոխանակեն մշակույթի բնագավառում գիտական հետազոտությունների վերաբերյալ, ակտիվորեն կկիրառեն գիտական փոխանակումների եւ համագործակցության տարաբնույթ ձեւեր:

ՅՈՒՐԱԿՑ 10

Կողմերը կհամագործակցեն միմյանց, ինչպես նաեւ մտավոր սեփականության պաշտպանության եւ հատկապես հեղինակային իրավունքի պաշտպանության հարցերով զբաղվող միջազգային համապատասխան կազմակերպությունների հետ:

ՅՈՒՐԱԿՑ 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ազգային օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով փոխադարձաբար ծանուցման օրվանից եւ գործում է անորոշ ժամկետով:

Սույն Համաձայնագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերից մեկի՝ մյուս Կողմին նման մտադրության մասին դիվանագիտական ուղիներով ծանուցելուց վեց ամիս հետո:

Կատարված է Երեւան քաղաքում 2005 թվականի հոկտեմբերի 7-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, լատիշերեն եւ ռուսերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման հարցում տարաձայնության դեպքում գերակայություն ունի ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006 թ. հունիսի 26-ից:

